ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով տոներային քարտրիջների ձեռքբերման նպատակով ձևավորված « ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՏՔ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 06.09.2018թ. ժամը 16-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Մկրտչյանը, Լ.Հովհաննիսյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Անհամապատասխանությունը վերացնելու մասին

«Մ Վ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ -ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց.

1.1 Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել **«Մ Վ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ**-ին
1.2 Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել «**ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ**-ին:

2. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, 15.00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետերի՝ առաջին տեղեր զբաղեցրած մասնակցի վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,
2. Համաձայն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Մկրտչյան

_____ Լ.Հովհաննիսյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով տոներային քարտրիջների ձեռքբերման նպատակով ձևավորված « ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՏՔ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 05.09.2018թ. ժամը 10-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Մկրտչյանը, Լ.Հովհաննիսյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՏՔ-18/1» ծածկագրով ընթացակարգին ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին: Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«Մ Վ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ (ք.Երևան, Ազատության 27)**
2. **«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ (ք. Երևան, Վարդանանց 18/2)**
3. **«ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ (ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60)**
4. **«Կոմպլենդ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Դրոյի 48)**

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 **«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի և «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.2 **«Մ Վ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտի Հավելված 2-ը ստորագրավծ չէ հրավերի 1-ին մասի 7.19 կետի համաձայն:

3.3 **«Կոմպլենդ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտի գնային առաջարկում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով և թվերով նշված գումարների հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

Հ/Հ	Անվանում	Քանակ	Նախահաշվային գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/			
				«Մ Վ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ	«ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ	«Կոմպլենդ» ՍՊԸ

1	տոներային քարտրիջներ	25	350000	250000	253750	751250	287500

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Մերժել **«Կոմպլենդ» ՍՊԸ** -ի կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 40-րդ կետի 4-րդ ենթակետը:
2. Հիմք ընդունելով կարգի 41-րդ կետը՝ գնահատման գործընթացը կասեցնել մեկ աշխատանքային օրով: Հաջորդ նիստը հրավիրել **2018թ. սեպտեմբերի 06-ին, ժամը 16:00-ին,** ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Քարտուղարին՝

Այսօր էլեկտրոնային եղանակով «Մ Վ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին տեղեկացնել անհամապատասխանության և դրա՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Մկրտչյան

_____ Լ.Հովհաննիսյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան